

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ****ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ****ՀՐԴԵՀ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՈՒԱԳՐԱՅ****ԱՌԺԱՄԵԱՅ ՊԱՀՈՅԻՆ ՄԷՋ**

Սրտի ցաւով կու գանք տեղեկացնելու Հայ հասարակութեան, թէ 22 Հոկտեմբեր, 2024-ին, Պատրիարքութեանս Կիւլպէնկեան Մատենադարանին մէջ գտնուող ձեռագրաց առժամեայ պահոցին մէջ արտակարգ հրդեհ բռնկած էր:

Հրդեհի պահուն, բարեբախտաբար, Մատենադարանի տեսուչ՝ Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան, որ իր գրանսենակին մէջ կ'աշխատէր, կը նշմարէ ելեկտրականութեան տատանում, ապա կը միանայ հրդեհի ազդանշանը: Վերջինս անմիջապէս լուր կու տայ վանքիս ելեկտրագործին եւ միասին կը բարձրանան Մատենադարանի երկրորդ յարկ՝ ստուգելու ինչ է խնդիրը, եւ կը նշմարեն Ձեռագրապահոցի օդափոխութեան անցքերէն ծուխ կը յորդէ: Հ. Ներսէս անմիջապէս կը հեռախօսէ Ձեռագրատան տեսուչ՝ Տ. Արշակ Աբղ. Ղազարեանին, որ կը փութայ եւ կը բանայ պահոցի դուռը եւ ականատես կ'ըլլան թանձր եւ հեղձուցիչ ծուխի ամպերու: Հազիւ կը նշմարեն, որ պահոցին մէջ ձեռագիրներու համար մնայուն ջերմաստիճան ապահովելու նպատակով գետեղուած օդորակիչը, որ մշտապէս միացուած կ'ըլլար՝ կ'այրի:

Մատենադարանի տեսուչ՝ Հ. Ներսէս եւ իր օգնական՝ Օրիորդ Աննա Բարսեղեան, Ձեռագրատան տեսուչ՝ Հ. Արշակ, ելեկտրագործ՝ Պաշար Ալ-Ռաժապ եւ վանքիս շարժավար՝ Տիգրան Շահգալդեան ջուրով եւ հրդեհամարիչ կազերով մեծ դժուարութեամբ կը յաջողին մարել կրակը եւ թանձր ծուխի մէջ՝ բանալ պատուհանները: Ապա լուր կու տան վանքիս Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեանին, որ հրշէջներ կանչէ: Հրշէջներ երբ կը ժամանեն անմիջապէս բոլորին դուրս կը հրաւիրեն եւ յատուկ փոմփով կը մաքրեն պահոցին թանձր ծուխը:

Բարեբախտաբար օդորակիչը գետեղուած էր պահոցի անկիւնը՝ հեռու ձեռագիրներու պահարաններէն: Աստուծոյ ողորմութեամբ հրդեհէն որեւէ ձեռագիր չէ վնասած, չէ այրուած: Միակ վնասը պահոցի մէջ լեցուած ծուխէն մնացած մուրն է, որ նստած է Ձեռագիրներու կողերուն, ինչը շուտով կը մաքրուի եւ ձեռագիրները կը փոխադրուին նորաշէն Ձեռագրատուն, որ գինուած է ոչ միայն հակահրդեհային համակարգի ազդանշանով, այլ նաեւ հրդեհի պարագային կրակը անմիջապէս մարելու կազի սրսկման համակարգով:

Կրակը մարելէն յետոյ, հրդեհի պահուն պահոցի մէջ գտնուած՝ Մատենադարանի տեսուչ՝ Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան, Ձեռագրատան տեսուչ՝ Տ. Արշակ Աբղ. Ղազարեան, Մատենադարանի հաւաքածոներու եւ գրացուցակներու համակարգող՝ Օր. Աննա Բարսեղեան, ելեկտրագործ՝ Պաշար Ալ-Ռաժապ, Շարժավար՝ Տիգրան Շահգալդեան, Պատրիարքարանիս հաշուապահ՝ Մուսա Քամար, Պատրիարքարանի մաքրութեան օգնական՝

Ճօնի Պա՛պիշ շտապ օգնութեամբ փոխադրուեցան հիւանդանոց, ապա բժշկական քննութիւններէ եւ անհրաժեշտ դարմանումէ ետք ուշ գիշերին վերադարձան վանք:

Թող Տիրոջ ողորմութիւնը եւ Սուրբ Գլխադրի եւ ձեռագիր մատեաններու գրիչ հայրերու բարեխօսութիւնը անպակաս ըլլայ Սուրբ Աթոռէս եւ յատկապէս անոնցմէ, որ անձնուէր կերպով փութացին մարելու պատահած հրդեհը:

Յ. Գ. Տարիներ առաջ, երբ Սբ. Թէոդորոս Եկեղեցւոյ մէջ անձրեւաջուրեր կը թափանցէին եւ Ձեռագիրները վնասելու վտանգ կը սպառնար, Տնօրէն Ժողովի որոշումով օրուան Տեսուչ՝ Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան իր օգնականներու հետ միասին Ձեռագիրները ըստ Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց հատորներու հաշուած եւ փոխադրած է Կիւլպէնկեան Մատենադարանի երկրորդ յարկ՝ առժամեայ պահոց:

Երբ Հ. Շնորհք մեկնեց Հայաստան՝ իր ծառայութիւնը հոն շարունակելու, Տնօրէն Ժողովը նշանակեց Տ. Ներսէհ Աբղ. Ալոյեանը որպէս Ձեռագրատան նոր տեսուչ, նաեւ չորս հոգինոց յանձնախումբ մը, որոնք ձեռագիրները մէկ առ մէկ հաշուելէ յետոյ արձանագրութիւն կազմեցին եւ տեղի ունեցաւ յանձնում-ստանձնում:

2021-ին երբ Ձեռագրատան տեսուչ նշանակուեցաւ Տ. Արշակ Աբղ. Ղազարեան, դարձեալ ձեռագիրները երեք հոգինոց յանձնախումբով մի առ մի հաշուեցին եւ տեղի ունեցաւ յանձնում-ստանձնում:

Յիշեալ փոխանցումներու ժամանակ ձեռագիրները հաշուած եւ ստուգուած են ըստ Նորայր Աբք. Պողարեանի Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց հատորներու եւ ապա արձանագրութիւն կազմուած եւ ներկայացուած է Տնօրէն Ժողովին:

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

